

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 68) Այս Յուլիանէին շնչից կեանք մը նոր.  
Քաղցր, ազատ ոյժեր իր մէջ զօրացան,  
Քաղցրացաւ նաեւ առտըւան համբոյր՝  
Որով ամենայն օր կ'ողջունէր զայն,  
Իրեն՝ բարեմիտ շրթներն էին միայն,  
Ազնիւ հպումներ միտք սըրտին անոր, բայց  
Բոց կու տար այրող, լափող ջերմութեան,  
Մաշող հառաչով կարծես օրհնելած՝  
Ոչ թէ ըստորին մըտածումներ ըլլային բերած:
- 69) Կեանքն իր երկար մարտ էր մտայնողացման,  
Թըշնամուն դէմ կամ սիրելուն վտարուած,  
Միտքն իր կասկածի ապաստանարան.  
Գոց՝ իրեն զոհին միայն նըփրած.  
Գըթագուրկ սըրտով իր զոհն էր ընտրած.  
Մոլեգնած էր ան, ով կըրնար գիտնալ՝  
Ինչո՞ւ պատճառը անլուծ մընացած.  
Բայց խենթ էր, հիւանդ էր ան, վըշտահար  
Այն աստիճան որ Հիւանդութիւնըն ինքզինքն ցոյց կու տար:
- 70) Այսպէս ներշնչուած՝ անկէ կու զային,  
Զերթ պիթեանի հին միսթիկ քարայրէն՝  
Պատգամներ որոնք աշխարհն կ'այրէին,  
Իսպառ փըրկելու թագակիրներէն,  
Ֆըրանսան չէր միթէ՞ առաջ բոլորէն՝  
Կըրող բնածին իր բըռնապետութեան  
Շըղթաներ ամուր, տարիներ երկար,  
Մինչեւ որ ինքն ու իրիներու ձայն  
Գըրգըռեց զայրութիւն հետեւանք վախի չափազանցութեան:
- 71) Անոնք ինքզինքնին ահի յուշարձան  
ըրին, ըստ իրենց փուճ, հին տեսակէտին.  
Ժամանակին հետ ծնած-քողն պատռեցին  
Որ իրենց ճեղքած այդ քողին ետին  
Պահուածքներն ցուցնեն ամեն անհատին  
Գէշին հետ լաւն ալ որ իյնան այնպէս.  
Աւերակ մնայ միայն՝ որմէ կառուցուին  
Զընտաններ, գահեր որ, առաջուան պէս,  
Նոյն հիման վրայ սնափառութիւն ելլէ հանդէս:

(շարունակելի)

LORD BYRON  
Թրգմն. Մուրատ Մանուկեան